ՀՈՒՇԱԳԻՐ

ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի Մեխանիկայի ինստիտուտի և Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի միջև համատեղ աշխատանքներ կատարելու վերաբերյալ

Ընդհանուր դրույթներ

Հաշվի առնելով հանրակրթական ծրագրերում ԲՏՃՄ (բնագիտություն, տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներ (ՏՀՏ), ճարտարագիտություն, մաթեմատիկա) ուղղության առջև ծառացած մարտահրավերները և զարգացման հիմնախնդիրները՝ ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի Մեխանիկայի ինստիտուտը (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ ՄԻ) և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը (այսուհետ՝ ՀՊՄՀ), իրենց մտադրությունն են արտահայտում համատեղ

- գիտահետազոտական աշխատանքներ կատարելու,
- գիտամանկավարժական աշխատանքներ կատարելու,
- տեսագործնական դասընթացներ կազմակերպելու ուղղությամբ:

Վերոնշյալ աշխատանքները նպատակաուղղված են լինելու համալսարանի ուսանողներին ծանոթացնել մեխանիկա գիտության հիմնահարցերին, արթնացնել նրանց հետաքրքրությունը կիրառական ուսումնասիրությունների, հետազոտությունների նկատմամբ, առավել ընդունակ և խոստումնալից ուսանողներին ներգրավել գիտահետազոտական աշխատանքներում:

Աշխատանքները կատարվելու են հետևյալ ուղղություններով.

- բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական աշխատանքների և թեզերի նախապատրաստման խորհրդատվություն,
- ուսանողների մասնակցությունը փորձարարական հետազոտություններին,
- այլ աշխատանքներ ըստ երկողմ համաձայնության:

Աշխատանքները կիրականացվեն Կողմերի համակարգերում գործող կրթական ծրագրերի շրջանակներում և ֆինանսական որևէ պարտականություն հուշագիրը ստորագրող կողմերը չեն կրում:

Այլ պայմաններ

Հուշագրի շրջանակներում կարող են իրականացվել նաև այլ նախագծեր, որոնք կկարգավորվեն համապատասխան պայմանագրերով:

Սույն հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և վավեր է հինգ տարի:

Հուշագիրը կազմվել է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, ստորագրվել է Երևանում 2024 թվականի հունիսի 26-ին:

ՀՀ ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտի կողմից	Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կողմից
Տնօրեն՝ Լ. Դաշտոյան	Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի դեկան Գ. Գեսիրխանյան
Կ.Տ.	Կ.Տ.